

Մ Ի Վ Հ Ա Տ Ի Ր.

Տես՝ խաւարը թանձրանում է,
վերջին շողն էլ կը հանգչի.
Սիւս, ցուրտ զիշեր մօտննում է—
Արեւը շուտ կը թազի

Հրգուդ քունը հեռու քշիր—
Մեռելութիւն չը բերէ,
Յուսոյ ձայնը թող սիրալիր
Սրտիդ քոցը վառ պահէ:

Մի՛ վհատիր, եթէ աներ
Եւ սուգն ընկաւ քեզ քաժին.
Թող ստրկութեան մոայլ զիշեր
Ա՛յ չը բերէ քո սրտին:

Թէ երգը անուշ սուրբ բերկրութեան
Էլ տեղ չունի աշխարհում,
Թէ շղթայի հիմայ դաժան
Շաշիւնն է լոկ քեզ հասնում—

Մի՛ վհատիր, ե՛լ ասպարէզ,
Ա՛ռ եթմաղի քո քընար
Եւ տանջանքի՛ օրհներգ տուր մեզ,
Ողբի աղբիւր մեզ համար:

Կամ՝ թող հնչեն հօօր լարեր
Որպէս փողը յաղթական:

Թնդան ուժգին թմրած սրտեր,
Փայլի սուրբ խաչ վկայութեան . . .

Եւ քո ձայնը թող որոտայ
Ինչպէս ամպրոպ խաւարում—
Թուխալը ցրուի՝ փայլակ ցոլայ
Արեամբ փրկուած աշխարհում:

Ա. ՊԵՏԵՐՅԱՆ.

Ես դուրս եմ՝ զալիս դաշտը ամայի—
Ձը կայ մի ծաղիկ, զարդարէ նորան.
Ձը կայ եւ մի ոստ, որից սոխակի
Մեղեղին հնչէր քնքոյշ, քաղցրաձայն:
Խաւար է զիշեր, երկնակամարում՝
Ձէ ցոլում՝ ոչ մի լուսավառ աստղիկ—
Այսպէս ժամանակ, ի՛նչպէս է լինում,
Որ միտս ես ընկնումս նազելի՛ աղջիկ:

Դու միտս ես ընկնումս եւ ամենայն ըմ
Փոխուում է սցստեղ. պայծառ է զիշեր,
Եւ ճանապարհիս քացուած են վարդեր,
Երգում է այնտեղ սոխակն անմուման.
Առաջիս դաշտն է բիր ծաղիկներով.
Երկինքն էլ վառ է փայլուն աստղերով:

Յ. ՅԱՅԵԱՆ.

ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻԶՆԵՐ.

Առաքել Բաղիշեցի, նաղաշ, կարապետ
վարդապետ Բաղիշեցի, Գրիգոր ծերենց:

Միջնադարեան հայ բանաստեղծների
երգերն հեռոջհեռէ հրատարակել խոստանա-
լով՝ այս նուազ կամենում ենք ճաշակ տալ
չորս հին երգիչների քերթուածների մօտին:
Թէ ինչ աստիճանի սերտ է մեր հին և նոր
ժողովրդական երգիչների մէջ եղած կապը,
այդ կը տեսնէ իւրաքանչիւր մօտիկից դիտողը:
Հայ ժողովրդական երգիչների դպրոցը շատ
հին պէտք է լինի թէպէտ և մեր դրաւոր
դրականութեան պահած նշխարներից դատե-
լով՝ այդ դպրոցի հետքերը կարող ենք դէպի
վեր մինչև թի. դարը հասցնել: Այն զարմա-

նալի նմանութիւնը, որ կայ մեր դարու և
նախընթաց դարերի հայ երգիչների քերթու-
թեան ձևերի և բովանդակութեան մէջ, դու-
շակել է տալիս, որ այդ նմանութեան հետ-
քերը շատ հին պիտի լինին: Ընայժմ մեզ
մատչելի նիւթերի մէջ կարող ենք հայ եր-
գիչների մի որոշ դպրոցի արտադրութեան
նշաններն արձանագրել: Այդ դպրոցը կարելի
է ամենայն իրաւամբ Ներսէս Շնորհալու-
դապոց կոչել, որովհետև նա է այն հնագոյն
երգիչը, որի երկրի մէջ առաջին անգամ
նկատում ենք այն բոլոր բանաստեղծական ձևերն
ու. տաղաչափական խաղերը, որ յետագայ եր-
գիչների համար կանոնական նշանակութիւն
են ստացել:

Այն չորս երգիչներն, որոնց երգերիցը